ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ Շահումյանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ
Գիտատեխնիկական խորհրդի նախագահ
_____ Մ. Ա. Պողոսյան
«22» հուլիսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ Շահումյանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ, Անուշ Պարգևի Տոնապետյանի «Արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի մշակում և պարամետրերի հիմնավորում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Հայաստանի ազգային ագրարային համալսարանին կից ԲԿԳԿ-ի 033 «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտական խորհրդի Ե.20.01 «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականաշնորհումից հետո շատ մշակաբույսեր, այդ թվում նաև արմատապտուղները, մշակվում են գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ոչ մեծ հողակտորներում, որտեղ բերքահավաքի բարձր արտադրողական մեքենաները գործնականում կիրառելի չեն՝ իրենց թանկարժեքության և տարբեր տեսակի արմատապտուղների բերքահավաքի համար կիրառվող ունիվերսալ բանվորական օրգանների բացակայության պատճառով: Ուստի փոքր հողակտորներում արմատապտուղների բերքահավաքի մեքենաների ստեղծումը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրության կարևորագույն խնդիր, որով և պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ընդհանրացվել են արմատապտուղների բերքահավաքի մեքենայացման արդի վիճակը, տեխնիկական

միջոցների մշակման գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, փոքր հողակտորներում արմատապտուղների բերքահավաքի մեքենաների կիրառման նպատակահարմարության հիմնավորումները և դրանց կատարելագործման հեռանկարային ուղղությունները

Նախագծվել և պատրաստվել է ՀՀ գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների փոքր հողակտորներում արմատապտուղների բերքահավաքի ունիվերսալ փոքրաչափ մեքենա:

Մշակվել է արմատապտուղների բերքահավաքի ունիվերսալ փոքրաչափ մեքենայի բանող օրգանների պարամետրերի որոշման և հողի հետ ուժային փոխազդեցության, մեքենայի ուղղույթի կայունության հաշվարկի տեսություն և ստացվել կառուցվածքատեխնոլոգիական պարամետրերի որոշման հաշվարկային բանաձևեր:

Գիտափորձնական հետազոտություններով որոշվել է արմատապտուղների բերքահավաքի գործընթացը բնութագրող մի շարք գործոնների միջև ռեգրեսիոն կախվածություններ՝ ըստ մշակված ծրագրի և մեթոդիկայի:

Արտադրական փորձարկումների արդյունքներով հիմնավորվել է առաջարկված արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի տնտեսական արդյունավետությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Կատարված տեսական և գիտափորձնական հետազոտությունների արդյունքների գիտագործնական նշանակությունն արժևորվում է փոքր հողակտորներում մշակվող արմատապտուղների բերքահավաքի մեքենայի և բանող օրգանների պարամետրերի օպտիմալացման և մեքենայի շարժման կայունության ապահովման հաշվարկի տեսության մշակումով, որը կարող է օգտագործվել տեխնոլոգիապես նմանատիպ մեքենաների մշակման համար:

Հետազոտությունների արդյունքների վերլուծությամբ մշակվել է արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենա (ՀՀ արտոնագիր N 602U),

որը կարելի է արդյունավետորեն օգտագործել նաև պալարապտուղների բերքահավաքի համար:

Մշակված արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի փորձանմուշի արտադրական փորձարկումներն իրականացվել են Արագածոտնի մարզի Հնաբերդի համայնքի գյուղացիական տնտեսություններում, որի արդյունքներից պարզվել է, որ մեքենան ապահովում է փոքր հողակտորներում արմատապտուղների ավելի քան 95%-ով հողից անվնաս հանումը:

Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել և քննարկվել են ուսանողական, ասպիրանտական, պրոֆեսորա-դասախոսական կազմի ամենամյա գիտաժողովներում, Ավտոտրակտորների և գյուղմեքենաների ամբիոնի սեմինար խորհրդակցություններում (2021-2026թ.թ.) և ամբիոնի ընդլայնված նիստում, 2026թ.:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 բաժիններից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից՝ 122 անվանումով: Այն շարադրված է 135 էջի վրա, ընդգրկում է 47 նկար և 12 աղյուսակ:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 8 տպագիր աշխատանքներում (այդ թվում 1 ՀՀ արտոնագիր):

Ներածությունում շարադրված են թեմայի արդիականությունը և աշխատանության ներկայացված հիմնական դրույթները:

Առաջին բաժնում ներկայացված են հետազոտության խնդիրները: Կատարվել է գյուղատնտեսությունում արմատապտուղների բերքահավաքի տեխնոլոգիաների վերլուծություն, դրանց թերությունների բացահայտում և վերացման ուղիների նախանշում: Ձևավորվել են հետազոտությունների նպատակն ու հիմնական խնդիրները:

Երկրորդ բաժնում ուսումնասիրվել է արմատապտուղների բերքահավաքի մեքենաների բանվորական օրգանների նախագծման առանձնահատկությունները, հետազոտվել է սկավառակավոր բանվորական օրգանի աշխատանքային մակերևույթով հողի շարժման կինեմատիկան, հիմնավորվել են բանվորական

օրգանների պարամետրերը և բացահայտվել դրանց ազդեցությունն արմատապտուղների բերքահավաքի որակական ցուցանիշների վրա:

Արմատապտուղների բերքահավաքի արդյունավետ կազմակերպման համար մշակվել է փոքրաչափ մեքենա, որն ունի պարզ կառուցվածք, փոքր եզրաչափեր, ցածր արժեք և փոքր շահագործական ծախսեր, ապահովում է փոքր հողակտորներում արմատապտուղների լրիվ հանումը: Այն ունիվերսալ է, կարելի է արդյունավետ օգտագործել ինչպես արմատապտուղների, այնպես էլ պալարապտուղների բերքահավաքի համար:

Երրորդ բաժնում մշակվել է գիտափորձնական հետազոտությունների ծրագիրը և մեթոդիկան: Գիտափորձերը նախապատրաստվել և անցկացվել են դրանց պլանավորման և արդյունքների մաթեմատիկական մշակման ընդունված մեթոդների հիման վրա: Համապատասխան մշակված ծրագրի պատրաստվել է արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի փորձանմուշ, ճշգրտվել են առաջարկված արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի բանող օրգանների տեսական հետազոտություններով ստացված պարամետրերը, որոշվել է առաջարկված արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի քարշային դիմադրությունը, որոշվել են մշակված արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի աշխատանքի որակական ցուցանիշները:

Չորրորդ բաժնում բերվել են գիտափորձնական հետազոտությունների արդյունքները և կատարվել վերլուծություններ: ՈՒսումնասիրվել է արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի սկավառակավոր բանող օրգանի գրոհի և ուղղաձիգի նկատմամբ կանգնակի թեքման անկյունների ազդեցությունը քարշային դիմադրության վրա: Արմատապտուղների բերքահավաքի գործընթացի որակական ցուցանիշների որոշման նպատակով իրականացվել են դաշտային գիտափորձեր, որի ժամանակ որոշվել են հողից անջատված և մակերևույթ դուրս եկած արմատապտուղների ընդհանուր թվաքանակը, ինչպես նաև, հողի մակերևույթ դուրս եկած չվնասված արմատապտուղների թվաքանակը, կազմվել դրանց ռեգրեսիոն հավասարումներ ու համապատասխան գրաֆիկներ և կատարվել վերլուծություններ:

Հինգերորդ գլխում կատարվել է արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի կիրառման տնտեսական արդյունավետության հիմնավորում:

Ատենախոսությունն ավարտվում է ընդհանուր եզրակացություններով ու առաջարկություններով, օգտագործված գրականության ցանկով:
Հետազոտություններով ստացված արդյունքներն ունեն գիտագործնական կարևոր նշանակություն:

Ատենախոսության վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները.

1. Աշխատանքում բացակայում են տվյալներ մշակված արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի շահագործական հուսալիության վերաբերյալ, որը կարևոր է նախագծված մեքենան արտադրության հանձնելու համար:
2. Գիտափորձերով, մեքենայի քարշային դիմադրությունը որոշելիս, որպես անկախ գործոններ վերցվել են սկավառակի գրոհի և կանգնակի դրվածքի անկյունները: Ցանկալի կլիներ, որպես երրորդ անկախ գործոն, ընտրվեր մեքենայի շարժման արագությունը, քանի որ այն էականորեն ազդում է մեքենայի քարշային դիմադրության վրա:
3. Գիտափորձնական հետազոտությունները կատարվել են միայն Արագածոտն մարզի Հնաբերդ համայնքի սևահողերում, լավ կլիներ հետազոտությունները կատարվեր նաև այլ հողային պայմաններում (այլ տարածաշրջաններում):
4. Եզրակացություններից երևում է, որ մշակված արմատապտուղների բերքահավաքի մեքենան կարելի է կիրառել պալարապտուղների բերքահավաքի համար, սակայն ատենախոսությունում չի նշված թե ինչպես:

Արված դիտողությունները բացասաբար չեն կարող ազդել ատենախոսության գիտական և արտադրական նշանակության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անուշ Պարգևի Տոնապետյանի ատենախոսական աշխատանքը համարվում է ավարտուն գիտական աշխատանք, որտեղ հեղինակի կողմից կատարված տեսական ու գիտափորձնական հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակված արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենան անցել է արտադրական փորձարկումները:

Ատենախոսական աշխատանքը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի, ինչպես նաև, ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, համապատասխանում է Ե.20.01 «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությանն, իսկ ատենախոսության հեղինակն՝ Անուշ Պարգևի Տոնապետյանն արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է ՀՀ Շահումյանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ գիտատեխնիկական խորհրդի 2026թ հունիսի 22-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 2), մասնակցությամբ տեխնիկական գիտությունների դոկտորներ Ս.Ե.Մարգարյանի (խորհրդի նախագահի տեղակալ), գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Գ.Հ.Գիլոյանի (խորհրդի գիտական քարտուղար), Հ.Թ.Հակոբյանի, տեխնիկական գիտությունների թեկնածուներ Վ. Զ. Մելիքյանի, Ա.Գ.Մազմանյանի, և արտադրության ներկայացուցիչների:

Կարծիքը կազմեցին տ.գ.դ.		Ա.Ս.Մարգարյանը
տ.գ.դ.		Հ.Թ.Հակոբյանը
տ.գ.թ.		Ա.Գ.Մազմանյանը
տ.գ.թ.		Վ. Զ. Մելիքյանը

Տ.գ.դ. Ս.Ե.Մարգարյանի, տ.գ.դ. Հ.Թ.Հակոբյանի, տ.գ.թ. Վ. Զ. Մելիքյանի և տ.գ.թ. Ա.Գ. Մազմանյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ.

Գիտատեխնիկական խորհրդի քարտուղար գ.գ.դ. պրոֆ. Գ.Հ.Գիլոյան

22.06.2026թ.